ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Լիլիթ Մակարյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Հիմնաբառեր. խորհրդային, իշխանափոխություն, տարածաշրջան, պատերազմ, համավարակ:

1920 թ. Թուրքիան պատերազմական նախապատրաստություն էր տեսնում ՀՀ վրա հարձակվելու համար: Մ. Քեմալը հասկանում էր, որ Ռուսաստանը ևս ունի Անդրկովկասը նվաճելու ծրագիր, և ավելի իրական էր համարում Անդրկովկասի բաժանումը Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Մինչ Թուրքիան 1920 թ. սեպտեմբերից վավթում էր ՀՀ տարածքները, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռով ՀՀ-ին Արևմտյան Հայաստանից տրվելու էր 90 հազ. կմ² տարածք: Ռուսաստանը իր առջև խնդիր էր դրել խորհրդայնացնել տարածաշրջանը և Թուրքիայի միջոցով խորհրդային կարգեր հաստատել նաև Արևելքի երկրներում:

Թուրքիան տարածաշրջանում իր ծրագրերը փորձեց իրագործել նաև 2016 թ. ապրիլին՝ Արցախի դեմ Ադրբեջանի ձեռքով սանձազերծելով ռազմական գործողություններ, որոնք ձախողվեցին: Թուրքիայի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 2018 թ. ՀՀ-ում իշխանափոխությունից հետո, երբ հասարակությունը պառակտվել էր, պաշտոններում նշանակվում էին ոչ կոմպետենտ պաշտոնյաներ, տեղի էին ունենում բանակի բարձրագույն սպայակազմի բարոյազրկում, արտաքին քաղաքականության ձախողումներ: 2020 թ. Թուրքիայի վավթողական ծրագրերի համար նոր հնարավորություններ ստեղծեց «Covid-19» համավարակը, որի հետևանքով Հայաստանը հայտնվեց ամբողջական շրջափակման մեջ:

1918 թ. հայ ժողովուրդը երկար դարերի ընդմիջումից հետո կրկին ձեռք բերեց անկախություն: Պետության ստեղծումն այդ ժամանակ այդքան էլ հասարակական-քաղաքական ձգտում չէր, այլ պայմանավորված էր տարածաշրջանի քաղաքական գործընթացներով: Անկախության վերանվաճման գործում իրենց վճռորոշ դերն ունեցան 1918 թ. Մայիսյան հերոսամարտերում թուրքերի դեմ տարած փառահեղ հաղթանակները, որոնց շնորհիվ կասեցվեցին Թուրքիայի նվաճողական ծրագրերը: Առաջին աշխարհամարտում հակամարտող Ռուսաստանը և Թուրքիան Բրեստ-Լիտովսկի հաշտությամբ տարածաշրջանում քաղաքական վերաձևումներ էին փորձում կատարել, մինչդեռ Անտանտի երկրները պատերազմի արդյունքներն ամփոփելու էին Փարիզում գումարվելիք հաշտության կոնֆերանսում: Նորաստեղծ ՀՀ կառավարությունը, հաշվի չառնելով ռուս-թուրքական մերձեցումը և դրանից բխող վտանգները, մեծ սպասումներ ուներ Անտանտի երկրներից:

Թուրքիայում սկսված քեմալական շարժումը փոփոխություններ էր ենթադրում նաև տարածաշրջանում: 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում բացվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որն ստեղծում է կառավարություն՝ Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ: Վերջինս փորձում էր ստեղծված իրավիճակից պարտված Թուրքիային դուրս բերել նվազագույն կորուստներով և Խորհրդային Ռուսաստանի միջոցով ամրապնդել դիրքերը: Մ. Քեմալը պատերազմական նախապատրաստություն էր տեսնում ՀՀ վրա հարձակվելու համար: Դրանով նա նախ ձգտում էր իրականացնել իր նվազագույն ծրագիրը՝ գրավել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, երկրորդ՝ գրավել ամբողջ Անդրկովկասը, դժվարության դեպքում՝ սահմանափակվել Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միացնելով: Նա հասկանում էր, որ Ռուսաստանը ևս ունի Անդրկովկասը նվաճելու ծրագիր, և ավելի իրական էր համարում դրա բաժանումը Թուրքիայի և Ռուսաստանի միջև[1]:

* Հոդվածը ներկայացվել է 02.04.2021 թ., գրախոսվել՝ 22.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 13:*

Միևնույն ժամանակ Հայաստանի վրա հարձակվելով՝ Թուրքիան նպատակ ուներ կանխել նորաստեղծ ՀՀ ամրապնդումն ու տարածքային բարելավման հնարավորությունները, որը կանխատեսելի էր Փարիզի վեհաժողովի արդյունքներով: Իր հերթին Խորհրդային Ռուսաստանը չէր հաշտվում Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության փլուզման հետ, որով կորցրել էր իր ազդեցությունը և հայտնվել էր տարածաշրջանից դուրս մղվելու վտանգի առջև: Այդ նկատառումով՝ 1920 թ. գարնանը խորհրդային Կարմիր բանակը մոտենում է Անդրկովկասին: Քեմալա-բոլշևիկյան մերձեցման արդյունքում 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակվում է խորհրդային հանրապետություն: 1920 թ. գարնանը քեմալականների անմիջական մասնակցությամբ թաթարների (ներկայիս ադրբեջանցիներ - Լ.Մ.) հրոսակախմբերն իրականացնում են Շուշիի և մերձակա հայկական բնակավայրերի տասնյակ հազար հայերի սպանդ: Մ. Քեմալը, լինելով պանթուրքիզմի եռանդուն ջատագովը, ձգտում էր դառնալ Մեծ Թուրանի ղեկավարը, մտադիր էր այն իրագործել միջազգային նպաստավոր իրադրության դեպքում և վերջնականապես վերացնել այդ ճանապարհին մխրճված հայկական սեպը[1]:

Տարածաշրջանի բոլշևիկ գործիչները՝ Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Պ. Մդիվանին և ուրիշներ, Մոսկվայից պահանջում էին անհապաղ թույլատրել ռազմական ճանապարհով խորհրդայնացնել Վրաստանը և Հայաստանը: Սակայն այդ կապակցությամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն 1920 թ. մայիսի 25-ին որոշում է. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ՝ մեզ վրա չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»: Այդ որոշումը, սակայն, չէր վերաբերում բոլշևիկների համար կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան գծին: 1920 թ. ամռանից ՀՀ-ն հայտնվել էր անկախությունը կորցնելու իրական սպառնալիքի առջև[2], սակայն ՀՀ իշխանությունները հույսը կապում էին Սևրի պայմանագրի հետ՝ հաշվի չառնելով տարածաշրջանում իրական թուրքական սպառնալիքը:

1920 թ. մայիսից սկսած՝ Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվայում ընթանում էին հայ-ռուսական բանակցություններ: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր պառլամենտի փոխնախագահ Լևոն Շանթը: Բանակցությունների հաջող ընթացքի վրա բացասական ազդեցություն էին ունենում Թուրքիան և Ադրբեջանը: Ինչպես Լ. Շանթն էր հաղորդում Մոսկվայից, բանակցությունների դժվարությունը կապված էր հենց հայ-ադրբեջանական սահմանի որոշման հարցի հետ[3]: Բաքուն, իր շահերից ելնելով, Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից պահանջում էր գրավել Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, Շարուր-Դարալագյազը, Օրդուբադը և Ջուլֆան: Խորհրդային Ռուսաստանի Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1920 թ. հունիսի 29-ին Լենինին տեղեկացնում է Բաքվի ակնարկների մասին և նշում, որ Արևելքում իրենց ամբողջ քաղաքականության համար ճակատագրական սխալ կլիներ, եթե իրենք սկսեին հենվել մեկ ազգային տարրի վրա՝ ընդդեմ մյուս ազգային տարրի[4]: Ռուս-հայկական բանակցությունները, որևէ արդյունք չտալով, ընդհատվում են:

Հայ-ռուսական բանակցությունները վերսկսվում են Թիֆլիսում, և 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվում է համաձայնագիր, որով ՌՍՖԽՀ և ՀՀ միջև ռազմական գործողությունները համարվում են դադարեցված, ՀՀ զորքերը գրավում են Շահթախթ-Խոկ, Ազնաբերդ-Սուլթանբեկ և այնուհետև Կուկից հյուսիս և Բազարչայից արևմուտք ընկած գիծը, Ղազախի գավառում՝ մինչև 1920 թ. հուլիսի 30-ը գրաված գիծը: Իսկ խորհրդային զորքերը գրավում են վիճելի մարզերը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ բացառությամբ տվյալ համաձայնագրով ՀՀ զորքերի տեղադրման համար

[1] Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 11, 14:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

որոշված սահմանի[1]: Նույն օրը Փարիզի արվարձան Սևրում Անտանտի և նրա դաշնակից երկրների (այդ թվում՝ ՀՀ) և պարտված Օսմանյան Թուրքիայի միջև կնքվում է հաշտության պայմանագիր: Սևրի պայմանագրով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր անկախ պետություն, իսկ թուրք-հայկական սահմանն անցնելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներով: Սահմանի վերջնական որոշումը հանձնարարվում էր ԱՄՆ նախագահին, իսկ Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանները որոշվելու էին այդ պետությունների փոխհամաձայնությամբ, տարաձայնությունների դեպքում կիրառվելու էր 89-րդ հոդվածով սահմանված դրույթը, այսինքն՝ սահմանները կորոշվեին դաշնակիցների կողմից[2]:

Քեմալական վարչակազմը, անհանգստանալով Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագրից և Սևրի պայմանագրից, Ռուսաստանի հետ սկսում է ինտենսիվ բանակցություններ: 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրված ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» համաձայնագրի նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պարտավորվում էին կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացելու երկու երկրների միջև հաղորդակցության ուղիները, որոնք կօգտագործվեին ապրանքների և մարդկանց փոխադրումների համար[3]: Այս համաձայնագրի նախագծով քեմալաբոլշևիկյան հարաբերությունները նոր հարթության վրա էին դրվում:

Միևնույն ժամանակ Լեգրան-Չիչերին հեռագրական կապից ակնհայտ է դառնում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը: Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանը նախազգուշական հեռագրով ԱԳ ժողկոմ Գ. Չիչերինին տեղեկացնում է թուրքերի կողմից երկաթուղու Շահթախթ-Ջուլֆա հատվածի գրավման մասին և խնդրում կասեցնել Թուրքիայի առաջխաղացումը: Հոկտեմբերի 2-ին Բ. Լեգրանին հղած հրահանգ-հեռագրում Գ. Չիչերինը նշում է, որ տեղեկություններ կան Անտանտի կողմից ՀՀ ուղարկվող մեծ քանակությամբ զենք-զինամթերքի վերաբերյալ, և որ Անտանտը ՀՀ-ն իր միջնաբերդն է դարձնում: Իսկ թուրքական հարձակման վերաբերյալ նա նշում է, որ այն սահմանափակվելու է Սարիղամիշ-Շահթաղթ գծով և չի սպառնում ՀՀ անկախությանը, այն տանում է իրենց հետ ցանկալի շփման և դաշնակներին կարող է դարձնել ավելի զիջող[4]: Չիչերինի այս հեռագրից ակնհայտ է դառնում, որ թուրքական ներխուժումը կատարվել է Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության գիտությամբ և թողտվությամբ: Ռուսաստանը ջանում էր Թուրքիայի պահել իր առանցքում և նրա միջոցով խորհրդային կարգեր հաստատել Արևելքի երկրներում:

Թուրքիան, առանց պատերազմ հայտարարելու, 1920 թ. սեպտեմբերի 28-ին հարձակվում է Հայաստանի վրա: ՀՀ կառավարության բազմաթիվ դիմումներն անարձագանք են մնում Անտանտի երկրների կողմից:

Քյազիմ Կարաբեքիր փաշայի զորքերը, առանց դիմադրության հանդիպելու, 1920 թ. աշնանը մտնում են ՀՀ տարածք, գրավում Կարսը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլը: Կարսի անկման մասին Ա. Խատիսյանը գրում է. «Միւս օրը, երբ Կարսի անկման ականատեսները հասան Երեւան, պարզուեցաւ, որ թուրքերը քաղաք են մտած գրեթէ առանց գնդակ արձակելու: Կարսը պահպանող զորքերու բարոյալքումը կատարեալ էր»[5]: Խատիսյանը նշում է, որ Կարսի բերդապետ Դ. Փիրումյանը, նախարար Ա. Բաբայյանը և մոտ 1500 հայ սպա գերի են ընկնում ու տարվում Էրզրում, որտեղ մնում են մեկ տարուց ավելի, իսկ նրանցից գերությունից վերադարձան ընդամենը 300 հոգի[6]: Նույնը նաև կատարվում էր Ալեքսանդրապոլի հետ: Քյազիմ Կարաբեքիրը նոյեմբերին ՀՀ կառավարությանը պարտադրում է ծանր պայմաններով հաշտության պայմաններ:

---

[1] *Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 102:*
[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1336, թթ 2-4:*
[3] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 10:*
[4] *Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 178:*
[5] *Տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու կարգացումը, Բեյրութ, 1968, էջ 279:*
[6] *Տե՛ս նույն տեղում:*

Մինչ Թուրքիան զավթում էր ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածքները, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը հայ-թուրքական սահմանի հարցով 1920 թ. նոյեմբերի 22-ին կայացնում է Իրավարար վճիռը, որի համաձայն Հայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների 2/3-ը, Էրզրումի գրեթե ամբողջ նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ելք ունենալով դեպի Սև ծով՝ մոտ 90 հազ. ք/կմ[1]: Սակայն Անտանտի երկրները որևէ գործնական քայլ չեն ձեռնարկում Թուրքիայի ներխուժումը ՀՀ կասեցնելու և բարբարոսությունները դադարեցնելու ուղղությամբ:

Ա. Բեկզադյանը հանդիպումներ է ունենում Թիֆլիսում Եվրոպայի ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքներն ամփոփելով՝ նշում է, որ նրանք պարզ և կտրուկ կերպով մեզ հայտարարեցին, որ Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել, և մենք մեր գլխի ճարը տեսնենք: Նույն դիրքն է գրավում նաև ԱՄՆ կառավարությունը: Ա. Ահարոնյանի՝ օգնության մասին անմիջական խնդրանքը Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից նույնպես մերժվում է[2]:

1919 թ. Վ. Վիլսոնը Անդրկովկաս և Մերձավոր Արևելք էր ուղարկել գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ ռազմական միսիա, որը պետք է ԱՄՆ կոնգրեսին առաջարկներ ներկայացներ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու նպատակահարմարության մասին: 1919 թ. ամռանից, երբ Փարիզի խաղաղության խորհրդաժողովը առաջարկել էր ԱՄՆ-ին վերցնել Հայաստանի մանդատը, անցել էր մոտ մեկ տարի և իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոխվել էր: Սենատոր Թոմսոնը կոնգրեսում իր ելույթում նշում է, որ, ըստ Մերձավոր Արևելքից եկած տեղեկությունների, կարելի է եզրակացնել, որ բոլշևիկներն արդեն Հայաստանում են, և որ նման պայմաններում Հայաստանում ամերիկյան բանակի ներկայությունը կարող է առաջ բերել միայն զինված ընդհարում սովետների հետ: 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ սենատը մերժում է Հայաստանի մանդատը վերցնելու Վ. Վիլսոնի առաջարկը: Հայաստանի մանդատը ահռելի ծախսեր էր ենթադրում: Սենատորները, քննարկելով Ջեյմն Հարբորդի զեկույցը, դժգոհություն էին արտահայտել, որ զեկույցում հստակ նշված չեն Հայաստանի սահմանները: Սենատոր Քինգը վկայում է. «Նախքան պրեզիդենտը կուղարկեր իր ուղերձը կոնգրեսին, մենք ստույգ տեղեկությունների հիման վրա նրան տեղեկացրել էինք, որ սենատորները բացասական վերաբերմունք ունեն, որ ուղերձը անպայմանորեն կմերժվի», և այդ մերժումը «հրավեր կլինի Հայաստանի թշնամիներին՝ հարձակվելու նրա վրա»: Հետագայում սենատոր Քինգը նշեց, որ կոնգրեսի այդ որոշումը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար[3]: ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատից հրաժարումը Թուրքիայի զավթողական ծրագրերի համար հանդիսացավ կանաչ լույս, և ՀՀ վրա հարձակվելու ոչ մի խոչընդոտ այլևս չկար:

1920 թ. օգոստոսի 14-ին Մ. Քեմալը Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ունեցած ելույթում ակնարկում է, որ Հայաստանի դեմ հունիսին նախատեսված թուրքական հարձակումը կասեցվել է խորհրդային կառավարության դիվանագիտական միջամտության միջոցով[4]: Ինչպես պատմաբան Լ. Խուրշուդյանն է նշում. «Արևմուտքը խաղից դուրս եկավ: Հայաստանը մնաց մենակ: Նրա ճակատագիրը պետք է տնօրինեին Թուրքիան և Ռուսաստանը»[5]:

Իր հուշերում Հ. Տերտերյանը վկայում է, որ «Սևրի առաջացրած խանդավառ ոգևորության հետևանքով մեր պետական և կուսակցական գործիչներից շատերը, թերագնահատելով Խորհրդային Ռուսաստանի դերը Հայ դատի լուծման մեջ, անտեսել էին կարմիր զորամասերի ներկայությունը Հայաստանի սահմաններում և չափազանց մեծ հույսեր էին

---

[1] *Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 14:*

[2] *Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 228:*

[3] *Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 207, 226, 228-229:*

[4] *Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., քաղ. պատմ. փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2000, էջ 251:*

[5] *Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 229:*

կապել դաշնակից պետությունների հետ՝ գերագնահատելով նրանց ուժերն ու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակությունն այն կարծիքին էր, որ դաշնակիցները, ինչքան էլ բարեկամ լինեն Միացյալ և Անկախ Հայաստանի դատի նկատմամբ, իսկ խորհրդային իշխանությունն էլ՝ ոչ բարյացկամ, ամենից առաջ նկատի պետք է առնվեր դառն իրականությունը: Մեր բարեկամ Ալիանսը շատ հեռու էր մեր երկրի սահմաններից, իսկ Խորհրդային Ռուսաստանի զորամասերն արդեն իսկ գտնվում էին Հայաստանի սահմանների մոտ և իրական սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի անկախության համար»[1]:

Ռուսաստանը միջամտեց միայն պատերազմի երկրորդ փուլում, երբ Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները բախվեցին Ռուսաստանի շահերին: Նոյեմբերի 29-ին խորհրդային զորքերը մտան Քարվանսարա և Հայաստանը հռչակեցին խորհրդային[2], իսկ պաշտոնական ձևակերպումն ստացավ դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրով[3]:

1920 թ. դեկտեմբերի 2-ի գիշերը Ալեքսանդրապոլում ստորագրված հայ-թուրքական հաշտության պայմանագրի համաձայն՝ Հայաստանը զրկվում էր զինապարտության իրավունքով բանակ պահելու իրավունքից, Թուրքիային էին զիջվում Կարսը, Արդահանի շրջանը, Երևանի նահանգի Սուրմալուի գավառը՝ թողնելով միայն Երևանի և Էջմիածնի գավառների մի մասը[4]: Սակայն Ալեքսանդրապոլի պայմանագիրը չվավերացվեց:

1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանը պարտություն կրեց, քանի որ Մայիսյան ապստամբության պարտությունից հետո հասարակությունը պառակտված էր, բանակը՝ բարոյալքված, երկրում տիրում էր սով ու համաճարակ, որին գումարվել էր ցեղասպանությունից փրկված հարյուր հազարավոր հայ գաղթականների, տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաների ծանր կացությունը, ինչպես նաև իշխանությունները կտրվել էին բուն քաղաքական իրավիճակից, անտեսելով տարածաշրջանի խորհրդայնացման գործընթացը՝ Հայաստանի ապագան կապում էին Արևմուտքի օգնության հետ: Հունիսի 1-ին արդեն ԱՄՆ սենատի կողմից Հայաստանի մանդատի մերժման փաստն ունենալով՝ ՀՀ իշխանությունները սպասում էին Սևրի պայմանագրի արդյունքներին:

Թուրքիան տարածաշրջանում իր անավարտ ծրագրերը փորձեց իրագործել նաև 2016 թ. ապրիլին՝ Արցախի դեմ Ադրբեջանի ձեռքով սանձազերծելով ռազմական գործողություններ: Սակայն Քառօրյա պատերազմում Հայոց բանակի և ՀՀ դիվանագիտական կառույցների, ինչպես նաև հայկական սփյուռքի կողմից կազմակերպված հուժկու հակահարվածի, բալանսավորված արտաքին քաղաքականության արդյունքում կանգնեցվեց պատերազմը: Թուրքիայի և Ադրբեջանի գործողությունները միջազգային հանրության կողմից արդարացված և ընկալելի չէին: 100 տարի առաջ Արևելյան Հայաստանում կիսատ թողնված ծրագրերը Թուրքիան ինտենսիվ սկսեց իրագործել Հայաստանի 2018 թ. իշխանափոխությունից անմիջապես հետո: Թուրքիան և Ադրբեջանը, օգտվելով Հայաստանի իշխանությունների ապաշնորհ կառավարումից, հատկապես՝ արտաքին հարաբերություններում գործընկերների և դաշնակից երկրների հետ ոչ կառուցողական և անվստահելի քաղաքականությունից՝ հետևողականորեն իրականացրին Հայաստանը ներսից թուլացնելու և միջազգային հանրության մոտ անկանխատեսելի և ագրեսոր պետության կերպար ստեղծելու քաղաքականություն: Իշխանափոխությունը բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի կյանքի բոլոր բնագավառների վրա, սկսվեց պետական կառույցների կազմաքանդման գործընթաց: Առաջին հարվածն ուղղվեց Հայ Առաքելական Եկեղեցու դեմ, կարծես եկեղեցին էր Հայաստանի անվտանգության խոչընդոտը և սոցիալ-տնտեսական խնդիրների պատճառը: Իշխանությունների բացարձակ թողտվությամբ «Նոր Հայաստան, նոր հայրապետ» շարժման (սկսել է դրսևորվել իշխանափոխությունից անմիջապես հետո -

[1] Տե՛ս Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 24-25:
[2] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 293:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 304:
[4] Տե՛ս Ջիվելեգով Ա. Կ., Հայաստանը և Թուրքիան, Երևան, 1991, էջ 23:

L.Մ.) կողմնակիցները 2018 թ. հուլիսի 6-ին ներխուժեցին Մայր Աթոռի դիվանատան շենք[1], հոկտեմբերի 31-ին՝ Մայր Աթոռի Վեհարան[2], իսկ այդ անօրինական գործողությունների համար ցայսօր ոչ ոք չի կրել քրեական պատասխանավություն, ավելին՝ չի դատապարտվել իշխանությունների կողմից: Իսկ Հայոց եկեղեցու դեմ մշտապես պայքար են մղել մեր թշնամիները և արտաքին ուղղորդմամբ գործող այս կամ այն աղանդավորական կառույցները: Հայոց եկեղեցին պետականության բացակայության պայմաններում դարեդար հայ ազգը միավորող միակ կառույցն է հանդիսացել, ինչպես նաև ավանդույթներն ու արժեքները պահպանողը, մշակութային ժառանգության կրողն ու փոխանցողը, ուստի թիրախը հենց այնպես չէր ընտրված: 2018 թ. իշխանափոխությունը որոշ շրջանակների կողմից որակվեց որպես գունավոր, «Թավշյա հեղափոխություն», իսկ իշխանությունը կորցրած քաղաքական ուժերը հակված են այն հեղաշրջում անվանելուն: Այնուամենայնիվ, չունենալով հստակ փաստեր, առայժմ դժվար է պնդել կատարվածի ճշմարտացիությունը, սակայն ակնհայտ է, որ դասական իմաստով այն հեղափոխություն չէր, քանզի հասարակության գիտակցության մեջ, մտածմունքներում և արժեհամակարգում եղկելի երևույթների հանդեպ չկա դրական փոփոխություն, ինքնագիտակցության բարձր զգացում, և գերիշխում է նույն հարմարվողական տրամադրվածությունը: Հայաստանի հասարակությունը ցանկություն չունի բարեփոխումների, պատրաստ չէ հրաժարվելու հոռի բարքերից և կրելու հայրենիքի ու պետականության հանդեպ պատասխանատվություն: Ինչպես 1920 թ., այնպես էլ 100 տարի անց Թուրքիան սպասում էր հարմար միջազգային իրադրության՝ իր վաղեմի ծրագրերը տարածաշրջանում իրագործելու համար: Թուրքիայի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև ՀՀ իշխանափոխությունից հետո, երբ հասարակությունը պառակտվել էր, որի սկիզբը դրվեց Երևանի քաղաքային ընտրություններում վարչապետի թիմակիցների կողմից «սև ուժեր և սպիտակ ուժեր» թեզը շրջանառելով, մասնավորապես՝ «Իմ քայլը» դաշինքի քաղաքապետի թեկնածու Հ. Մարությանի ելույթով[3], այնուհետև շարունակվեց «նախկիններ» և «ներկաներ» պիտակավորումը: Վարչապետ Ն. Փաշինյանի կոչով քաղաքացիների կողմից իրականացվեցին պետական կառույցների՝ դատարանների[4], ԱԺ-ի[5] շրջափակումներ և գործունեության պարալիզացում, գերատեսչությունների անհիմն միավորումներ և լուծարումներ, ոչ կոմպետենտ պաշտոնյաների նշանակումներ, բանակի բարձրագույն սպայակազմի բարոյազրկում և հետապնդումներ, դիվանագիտական դաշտում և հատկապես ԼՂ հիմնախնդրի շուրջ բանակցություններում ակնհայտ ձախողումներ: Բնականաբար այս գործընթացը Թուրքիայի զավթողական ծրագրերի համար նոր հնարավորություններ էր բացում, որին նպաստեց նաև 2020 թ. տարածաշրջանում տարածված «Covid-19» համավարակը: Վերջինի հետևանքով Հայաստանը հայտնվեց ամբողջովին արտաքին շրջափակման մեջ. փակվեցին նաև Իրանի և Վրաստանի սահմանները:

Անտեսելով 1920 թ. դառը փորձը և արտաքին վտանգը՝ ՀՀ իշխանությունները տարված էին ներքաղաքական խնդիրներով, սահմանադրական հանրաքվեի նախապատրաս-

---

[1] Տե՛ս Մայր Աթոռ մտած ցուցարարները հասել են կաթողիկոսի աշխատասենյակ, ոստիկանություն է ժամանել, հասանելի է՝https://armtimes.com/hy/article/141049: Հոդվածը տեղադրվել է՝ 06/072018, մուտք՝ 13.10.20:

[2] Տե՛ս Կաթողիկոսի հրաժարականը պահանջող նախաձեռնության անդամները փորձել են մուտք գործել Վեհարան, հասանելի է՝ https://armtimes.com/hy/article/147429: Հոդվածը տեղադրվել է՝ 31/10/2018, մուտք՝ 13.10.20:

[3] Տե՛ս Հայկ Մարությանի՝ «սևերի ու սպիտակների» մասին խոսքերը քննադատության ալիք են բարձրացրել, հասանելի է՝https://panarmenian.net/m/arm/news/259576: Հոդվածը տեղադրվել է՝ 3/09/2018, մուտք՝ 10.10.20:

[4] Տե՛ս Այսօր առավոտից շրջափակվել էին Երևանի բոլոր դատարանների մուտքերը, հասանելի է՝ https://www.azatutyun.am/a/29952585.html: Հոդվածը տեղադրվել է՝ 20/05/2019, մուտք՝15.10.20:

[5] Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց մարդկանց հենց այժմ հավաքվել Ազգային ժողովի շենքի մոտ, հասանելի է՝ https://armtimes.com/hy/article/145464: Հոդվածը տեղադրվել է՝ 2/10/2018, մուտք՝ 19.10.20: Վարչապետն Ազգային ժողովում է, քաղաքացիները մուտք են գործել ԱԺ-ի բակ, սպասում են մուտքի դռան մոտ. թարմացվող, հասանելի է՝ https://armtimes.com/hy/article/145478: Հոդվածը տեղադրվել է՝ 2/10/2018, մուտք՝ 19.10.20:

տական աշխատանքներով և Արևմուտքի կեղծ երաշխիքներով ու խոստումներով: Միևնույն ժամանակ անբարյացկամ և լարված հարաբերություններ էին տիրում դաշնակից Ռուսաստանի Դաշնության և հարևան Իրանի հետ: Վերջինիս հետ հարաբերությունները սրվեցին դեռ 2018 թ., երբ հոկտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնի՝ Հայաստան այցից հետո ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը, ԱՄՆ-ի շահերին տուրք տալով, նոյեմբերի 1-ին ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Հայ-իրանական սահմանը դե ֆակտո ամեն պահի կարող է փակվել՝ ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունների և աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով»: Հաջորդ օրն ՀՀ ԱԳ նախարարը փորձեց խմբագրել անհաջող և ոչ հայանպաստ հայտարարությունը[1]: Սակայն նույն ԱՄՆ սենատը 1920 թ. հունիսի 1-ին մերժել էր ստանձնելու Հայաստանի անվտանգության երաշխավորի մանդատը: ԱՄՆ-ը 2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի դեմ սանձազերծված ու չհայտարարված պատերազմում սահմանափակվեց անուղղակի հայտարարություններով՝ աչք փակելով Ադրբեջան-Թուրքիա տանդեմի կողմից Արցախի խաղաղ բնակչության դեմ իրականացվող ռազմական հանցագործությունների, մարտերում ահաբեկիչների ներգրավման, հայ ռազմագերիների կտտանքների և մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաների խախտումների վրա, քանի որ պատերազմը հնարավորություն էր տալիս ՆԱՏՕ-ին՝ Թուրքիայի միջոցով մոտենալու Իրանի սահմաններին և տարածաշրջանից դուրս մղելու Ռուսաստանին:

1920 թ. Հայաստանն ուներ պատերազմական վիճակում գտնվող չորս ճակատ՝ Կարս-Ալեքսանդրապոլ, Սուրմալու, Նախիջևան և Դիլիջան-Ղազախ[2]: Այդ ժամանակ Խորհրդային Ռուսաստանը, Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ադրբեջանը դաշնակիցներ էին: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության և ՀՀ դեմ սանձազերծված պատերազմը 1920 թ. թուրքական ներխուժման կրկնությունն էր՝ հետապնդած շահերով ու նպատակներով: Սակայն ՀՀ-ն այս անգամ ռազմավարական դաշնակից ուներ՝ հանձին ՌԴ-ի, որի հետ իշխանափոխությունից հետո հարաբերությունները հարթ չէին: Պատմաբան Լ. Խուրշուդյան իրավացիորեն իր մենագրությունը վերնագրել է «Հայաստանի բաժանումը 1920 թվականին»[3]: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից 2020 թ. սանձազերծված պատերազմի արդյունքում Արցախի Հանրապետության գոյությունը կասկածի տակ է, իսկ ճակատագիրը՝ մշուշոտ: Իր հերթին ՀՀ-ն, գտնվելով ներքաղաքական ճգնաժամում և աշխարհաքաղաքական շահերի բախման ու միջամտության կիզակետում, որպես միջազգայնորեն ճանաչված անկախ սուբյեկտ՝ ոչ միայն դադարել է տարածաշրջանում գործոն լինելուց, այլև կանգնած է անվտանգության լուրջ սպառնալիքների առաջ:

Նման աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներին ՀՀ-ն պատրաստ չէր: Սակայն իշխանությունների կողմից հասարակության մեջ համերաշխության և առողջ մթնոլորտի ձևավորումը, արտաքին ուժերի կողմից ֆինանսավորվող պետականաքանդ հիմնադրամների, ՀԿ-ների, աղանդավորական շարժումների գործունեության սահմանափակումը և վերահսկողությունը, ազգային արժեքների պահպանությունը պետական քաղաքականություն դարձնելը, պետական ապարատում ազգային ոգով դաստիարակված, կոմպետենտ և բանիմաց կադրերի ներգրավումը, զինված ուժերի մարտունակության բարձրացումը, բարեկամ և դաշնակից պետությունների հետ հարաբերությունների և գործակցության ընդլայնումը, Հայոց եկեղեցու և Սփյուռքի ներուժի ճիշտ ուղղորդումը և վստահության ձեռքբերումը հնարավորություն կտային արտաքին մարտահրավերները կասեցնելու և իրավիճակից դուրս գալու եթե ոչ հաղթանակով, ապա նվազագույն կորուստներով:

---

[1] *Տե՛ս Հայ-իրանական սահմանի վերաբերյալ Փաշինյանի մեկնաբանությունը վերաբերում էր մարտահրավերներին, այլ ոչ թե մտադրությանը. ԱԳ նախարարի պաշտոնակատար, հասանելի է՝ https://armenpress.am/arm/news/953182: Հոդվածը տեղադրվել է՝ 2/11/2018, մուտք՝ 13.10.20:*

[2] *Տե՛ս Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 289:*

[3] *Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ.:*

Лилит Макарян, ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ). В 1920 году Турция начала военную подготовку для нападения на Республику Армения. М. Кемал понимал, что Россия также разработала план покорения Закавказья, и более реальным считал разделение данной территории между Турцией и Россией. Пока Турция с сентября 1920 года захватывала международно признанные территории РА, по арбитражному решению президента США В. Вилсона, Республике Армения должна была быть передана территория от Западной Армении протяженностью 90 тыс. кв. км. Россия перед собой поставила задачу советизировать этот регион и, посредством Турции, также установить советскую власть в странах Востока.

Турция решила в регионе реализовать свои незавершенные планы, развязав в апреле 2016 года боевые действия с участием Азербайджана против Арцаха, но потерпела неудачу. Для Турции благоприятные условия создались в 2018 году, после смены власти в Армении, когда общество было расколото, на ответственные посты назначались некомпетентные должностные лица, имели место преследования высших офицеров армии, очевидные неудачи в дипломатии. В 2020 году, с распространением пандемии Covid-19, Армения оказалась в полной внешней блокаде, и для захватнических планов Турции создались новые возможности.

Ключевые слова: советский, смена власти, регион, война, пандемия.

Lilit Makaryan, THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS). Turkey was preparing to attack the Republic of Armenia in 1920. M. Kemal realized that Russia also had a plan to conquer Transcaucasia, and the division of Transcaucasia between Turkey and Russia seemed more realistic. Turkey had been occupying the internationally recognized territories of the Republic of Armenia since September 1920. According to the US President W. Wilson's Arbitral Award, 90000 sq. km area of Western Armenia would be given to the Republic of Armenia. Russia set the task to sovietize the region and establish the Soviet regime in the East with Turkey's support.

Turkey tried to accomplish its unfinished programs in the region in April 2016, encouraging Azerbaijan to launch military operation against Artsakh, which failed. The power shift in Armenia in 2018 put Turkey in favorable conditions: the society became disunited, incompetent officials were appointed to responsible positions, the highest ranking army officers were persecuted, obvious failures took place in foreign relations. The Covid-19 pandemic, which has been spreading in the region since 2020, placed Armenia under a complete external blockade and thus provided Turkey with new opportunities for its hostility programs.

***Keywords*:** Soviet, power shift, region, war, pandemic.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200